

«Ակտիվ կամավոր»

Խնդիր`

Խնդիրը վերաբերում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Քաղաքային միջավայրը հարմարեցված չէ տեղափոխման սահմանափակումներ ունեցող քաղաքացիների ակտիվ կյանքին, և այս ծրագիրը փորձում է նպաստել նրանց տեղաշարժմանը և սոցիալական կյանքի ինտեգրմանը:

Լուծում`

Հաշմանդամ քաղաքացիների սոցիալական բարեկեցության մարմիններում մի շղթա է տրամադրվում GPS թրեքերով և կոճակով: Այն քաղաքացիները, որոնք ցանկություն են հայտնում ակտիվ կամավոր դառնալու, իրենց հեռախոսների մեջ ներբեռնում են հատուկ ծրագիր: Անալոգային ծրագիրը պարտադիր կերպով տեղադրվում է առևտրի կենտրոնների, խանութների, դեղատների և կառավարական իշխանությունների ադմինիստրատորների հեռախոսների մեջ:

Եթե տեղաշարժման խնդիր ունեցող քաղաքացուն փողոցն անցնելու, տրանսպորտ նստելու, խանութ կամ դեղատուն մտնելու օգնություն է անհրաժեշտ, կամ նա ուղղակի կորել է, պարզապես սեղմում է կոճակը: Միաժամանակ, նա օգնություն է ստանում ամենամոտը գտնվող կամավորից, ում հեռախոսի մեջ ցուցադրվում են օգնության կարիք ունեցող քաղաքացու կոորդինատները:

Եթե տեղաշարժման սահմանափակում ունեցող քաղաքացին սեղմում է կոճակը խանութի, դեղատան կամ այլ որևէ հաստատության մոտ, տվյալ հաստատության ադմինիստրատորը պարտադիր կերպով դուրս է գալիս կամ պարզապես նախաձեռնում այլ օգնության միջոցներ: